Կենսաբանության մարզային փուլի պատասխանների թերթիկների լրացման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

**Ընդհանուր ցուցումներ**

1. *ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ* պետք է լրացնել բացառապես **ՍԵՎ** կամ **ԿԱՊՈՒՅՏ** գույնի գրիչներով: Չի թույլատրվում այն լրացնել գունավոր (կարմիր, կանաչ, դեղին և այլն) կամ գելային գրիչներով:

2. *Անձնական տվյալները* (ազգանուն, անուն, հայրանուն, մարզ և դպրոց) լրացնել ընթեռնելի ձեռագրով /տես նկարում/:




3. *Անձնական համար*–ի և *Առաջադրանք 3* –ի առաջադրանքների դատարկ տիրույթներում թվերը լրացնել ընթեռնելի ձեռագրով այնպես, որ թվանշանները միմյանց չդիպչեն և գունավոր ուղղանկյուն տիրույթից դուրս չլինեն /տես նկարներում/:




4. Համապատասխան քառակուսին նշել բացառապես ☒ -ի տեսքով:

***Անձնական համարի* լրացման ցուցումներ**

1. Ձեր անձնական համարը կհայտնի պատասխանատուն օլիմպիադայի անցկացման օրը կամ այն կարող եք գտնել առարկայական օլիմպիադաների համար նախատեսված կայքերում ([https://olymp.am/](https://olymp.am/) կամ [https://lib.armedu.am/](https://lib.armedu.am/)):

2. Լրացրեք ձեր անձնական համարը (**վեցանիշ թիվ**) ընթեռնելի ձեռագրով այնպես, որ թվանշանները միմյանց չդիպչեն: Օրինակ, **410343** անձնական համարը /տես վերևի նկարում/:

***Դասարանի* լրացման ցուցումներ**

1. *Դասարան* դաշտում ☒-ով նշել քառակուսին, որը պարունակում է ձեր դասարանի թիվը: Օրինակ, **11**-րդ դասարան /տես նկարը/:




***Ընտրովի պատասխանով* առաջադրանքների լրացման ցուցումներ**

Քառակուսիները լրացնելիս **չի թույլատրվում** տարբեր նշումներ կատարել, լրացնել բացառապես ☒–ով /տես նկարը/:




Ուշադրություն: **Ջնջումներ կատարել չի թույլատրվում:**

Ուղեցույցը կազմեց Դավիթ Մինասյանը: